*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ՀՊ*
*2022թ. հունվարի 27-ի թիվ 4-Ա որոշմամբ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ**

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս . . . . . 3

2. Ամփոփագիր . . . . . 4

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ . . . . . .4

4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ . . . . . .5

5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ . . . . . .8

# 1. Ներածական մաս

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. հոկտեմբերի 13-ի թիվ 249-Ա որոշման հիման վրա |
| **Հաշվեքննության օբյեկտը** | Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ |
| **Հաշվեքննության առարկան** | Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն |
| **Հաշվեքննության առարկայի չափանիշները** | ՀՀ Ազգային ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենք, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշում |
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ: |
| **Հաշվեքննության կատարման ժամկետը** | 2021թ. հոկտեմբերի 18-ից մինչև 2022թ. հունվարի 31-ը ներառյալ: |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը** | Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր: |
| **Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում** | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը: |

# 2. Ամփոփագիր

ՀՀ դատական դեպարտամենտի 2021 թվականի կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգերի հրապարակման ենթակա համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հրապարակված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ:

# 3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Էական անհամապատսխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերված անհամապատասխանությունները խեղաթյուրումները համատարած չեն:

Հայտնաբերված անհամապատասխանությունների ցանկ

| Հ/Հ | Անհամապատասխանության տեսակ | Անհամապատասխանությունը |
|---|---|---|
| 1. | Գնումների գործընթաց | ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/09 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում՝<br>Գնահատող հանձնաժողովի 13.07.21թ. տրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 19.07.21թ., ուստի այն հրապարակվել է 3 աշխատանքային օր ուշացումով: |

# 4.Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ

ՀՀ դատական դեպարտամենտի համար ՀՀ 2021թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է՝ 12,165,312.5 հազ. դրամ: Առաջին ինն ամիսների պլանը կազմել է՝ 8,223,238.3 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 8,871,921.6 հազ դրամ, ֆինանսավորումը՝ 7,862,171.58 հազ. դրամ, փաստը՝ 7,847,476.09 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 8,615,914.56 հազ. դրամ:

2020թ-ին տարեկան պլանը կազմել է 12,662,335.6 հազ. դրամ, 2020թ.-ի առաջին ինն ամիսների պլանը կազմել է՝ 8,795,959.1, ճշտված պլանը՝ 8,813,556.59 հազ.դրամ, ֆինանսավորումը՝ 7,898,448.35 հազ. դրամ, փաստը՝ 7,895,378.33 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 8,736,425.3 հազ. դրամ: 2021 թվականի առաջին ինն ամիսներում 2020թ.-ի համեմատ փաստը նվազել է 47,902.24 հազ. դրամով կամ 0.6%-ով:

«Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովում և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տարեսկզբին հաստատված գնումների պլանով նախատեսվել է 1,672,197.4 հազ. դրամ գումար: ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 2021թ. գնումների պլանով նախատեսված և մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ կազմակերպված թվով 249 գնման ընթացակարգերի շրջանակներում կնքվել է թվով 309 պայմանագիր ընդհանուր 972,439.11 հազ. դրամ պայմանագրային արժեքով, որից գազի, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, ինչպես նաև գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների համար կնքվել է թվով 177 պայմանագիր ընդհանուր 685,219.92 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Նշված պայմանագրերի շրջանակներում ներկայացված կատարողականներով

վճարվել է ընդհանուր 658,614.14 հազ. դրամ, որից գազի, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, ինչպես նաև գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների համար՝ 515,101.85 հազ. դրամ:

**ՀՀ դատական դեպարտամենտ 2021 թվականի ինն ամիս**

**Աղյուսակ 1**

| Ծրագիր | | 2021 թ. ինն ամիս | 2020 թ. ինն ամիս | | |
|---|---|---|---|---|---|
| | | Փաստ | Փաստ | Տարբերություն | Տարբերություն % |
| | Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը | **7 847 476,09** | **7 895 378,33** | **-47 902,24** | **-0,6%** |
| 1080-11001 | Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովում և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացում | **1 865 271,75** | **1 799 108,38** | **66 163,37** | **3,7%** |
| 1080-11002 | ՀՀ Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **474 889,88** | **490 488,33** | **-15 598,45** | **-3,2%** |
| 1080-11003 | ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **353 767,03** | **342 968,92** | **10 798,11** | **3,1%** |
| 1080-11004 | ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **383 513,54** | **379 217,60** | **4 295,94** | **1,1%** |
| 1080-11005 | ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **235 163,43** | **223 367,85** | **11 795,58** | **5,3%** |
| 1080-11006 | ՀՀ վարչական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վարչական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **504 344,96** | **479 845,47** | **24 499,49** | **5,1%** |
| 1080-11007 | Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական | **1 471 958,69** | **1 459 436,59** | **12 522,10** | **0,9%** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պաշտպանության իրավունքի ապահովում | | | | |
| 1080-11008 | ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **168 550,46** | **169 113,09** | **-562,63** | **-0,3%** |
| 1080-11009 | ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **307 159,47** | **292 616,27** | **14 543,20** | **5,0%** |
| 1080-11010 | ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **233 142,53** | **231 036,56** | **2 105,97** | **0,9%** |
| 1080-11011 | ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **235 222,63** | **251 103,03** | **-15 880,40** | **-6,3%** |
| 1080-11012 | ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **270 660,14** | **282 747,58** | **-12 087,44** | **-4,3%** |
| 1080-11013 | ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **246 743,09** | **248 381,72** | **-1 638,63** | **-0,7%** |
| 1080-11014 | ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **271 146,14** | **282 689,21** | **-11 543,07** | **-4,1%** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1080-11015 | ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **213 847,41** | **198 981,18** | **14 866,23** | **7,5%** |
| 1080-11016 | ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **178 371,47** | **166 530,94** | **11 840,53** | **7,1%** |
| 1080-11017 | ՀՀ Սնանկության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սնանկության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում | **269 546,99** | **273 612,43** | **-4 065,44** | **-1,5%** |
| 1080-11018 | Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի ձևավորում և կառավարում | **60 075,11** | **14 026,13** | **46 048,98** | **328,3%** |
| 1080-31001 | Բարձրագույն դատական խորհրդի տեխնիկական հագեցվածության բարելավում | **0,00** | **181 125,82** | **-181 125,82** | **-100,0%** |
| 1015-12001 | Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում | **104 101,37** | **128 981,23** | **-24 879,86** | **-19,3%** |
| 1015 | Սոցիալական փաթեթների ապահովում | | | | |
| | 1015-12001 | Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում | | | |

# 5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ

Կազմակերպված գնման ընթացակարգերում՝ հրապարակման ենթակա փաստաթղթերի կազմման և հրապարակման պահանջների կատարումը՝ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուսումնասիրությունից պարզվեց, որ.

1. ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/09 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում.

1.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե առկա է սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից: Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հրապարակվում է տեղեկագրում: Գնահատող հանձնաժողովի 13.07.21թ. տրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 19.07.21թ., ուստի այն հրապարակվել է 3 աշխատանքային օր ուշացումով:

1.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված: Տեղեկագրում 15.07.21թ. հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ նշված է, որ ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները հաստատվել են գնահատող հանձնաժողովի 19.07.21թ. թիվ 5 որոշմամբ, ուստի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը չէր կարող հրապարակվել տեղեկագրում նախքան գնահատող հանձնաժողովի կեղմից հայտերի վերջնական գնահատումը և ընտրված մասնակիցների վերաբերյալ որոշումը:

1.3 Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 15.07.21թ., իսկ կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը՝ 19.07.21թ.: ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ

526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, ուստի կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ չի հրապարակվել տեղեկագրում:

***Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.***

Վերոնշյալի կապակցությամբ հայտնում ենք, որ բարձրացված հարցադրումների հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ՝ Կարգ): Մասնավորապես Կարգի 43-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի

քարտուղարը իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:

Միաժամանակ Կարգի հիշյալ նորմն ամրագրված է նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան հրամաններով հաստատված և procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ էլեկտրոնային ձևով կազմակերպվող գնման ընթացակարգերի հրավերների օրինակելի ձևերում և հիշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում:

Վերոգրյալով պայմանավորված՝ տեղեկացվում է, որ քննարկվող ընթացակարգի շրջանակում՝ գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը, իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո նույն օրը, 19.07.2021 թվականին՝ պահպանելով նշված նորմերով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերվում է Դատական դեպարտամենտի կարիքների համար ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/09 ծածկագրով գնման ընթացակարգի մասով պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում 15.07.2021 թվականին հրապարակվելուն, տեղեկացվում է, որ էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի շրջանակում վերը նշված հայտարարությունը էլեկտրոնային աճուրդի համակարգի (eauction.armeps.am) միջոցով հրապարկվել է ավտոմատ եղանակով 19.07.2021 թվականին (gnumner.am կայքում հրապարակվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/09 ծածկագրով գնման ընթացակարգի չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին հայտարարություն» վերնագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի հրապարակման ամսաթիվը gnumner.am կայքում

15.07.2021 թ.-ն է, այնինչ նույն հայտարարության մեջ նշված է, որ ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները հաստատվել են գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 19-ի թիվ 5 որոշմամբ): Գնումների համակարգողը eauction.armeps.am համակարգում հայտարարությունը հրապարակելու համար վերջնական գործողությունները կատարել է 19.07.2021 թվականին, իսկ 15.07.2021 թվականի թվագրումով նշումը ընդամենը eauction.armeps.am համակարգի տեխնիկական խնդրի արդյունք է/:

***Հաշվեքննող խմբի արձագանքը.***

Ընդունվել է ի գիտություն: Միևնույն ժամանակ, նպատակահարմար կլինի, որպեսզի գնումների գործընթացի կարգավորման և համակարգման լիազոր մարմինը քայլեր ձեռնարկի «Գնումների մասին» ՀՀ օրենքով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված պահանջներում առկա տարբերությունները վերացնելու ուղղությամբ, ինչպես նաև eauction.armeps.am համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով իրականացվող գործընթացներում համապատասխան շտկումներ իրականացնելու ուղղությամբ և դրանք համապատասխանեցնելու գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերով սահմանված պահանջներին: